

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Քարտային գործառնությունների բողոքարկման և մոնիթորինգի բաժնի մասնագետ (երեկոյան և գիշերային հերթափոխով)

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

24/10/2024

08/11/2024

Անորոշ՝ երեք ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Քարտային գործառնությունների բողոքարկման և մոնիթորինգի բաժնի մասնագետի, երեկոյան և գիշերային հերթափոխով աշխատելու համար, ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բանկի կողմից թողարկված քարտերով կատարված գործարքների ամենօրյա ուսումնասիրություն և հսկողություն,
- Բանկի սպասարկման ցանցում կատարված գործարքների ուսումնասիրություն, վերլուծություն և անհրաժեշտ գործողությունների իրականացում,
- Բանկի կողմից թողարկված քարտերով կատարված գործարքների մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված կասկածելի գործարքների առկայության դեպքում հաճախորդների հետ կապի հաստատում, ճշտումների կատարում և անհրաժեշտության դեպքում քարտերի բլոկավորում կամ ապաբլոկավորում,
- Թողարկողի և սպասարկողի անվտանգության կանոնների գրանցման, հեռացման, դրանցում փոփոխությունների իրականացման առաջարկների ներկայացում անմիջական ղեկավարին:

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- 1 տարվա աշխատանքային փորձ
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Մայրենի լեզվի գերազանց, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Հաճախորդների սպասարկման հմտություններ
- Հաղորդակցման հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրութների նկատմամբ ուշադրություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարզևատրման ճկուն համակարգ, սպորտ ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Այդի Բանկի թիմին, անհրաժեշտ է լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» անվանումով: Այդի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը [: www.idbank.am](http://www.idbank.am)